ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Վերազգային կորպորացիաների և ազատ տնտեսական գոտիների դերը համաշխարհային տնտեսության մեջ։

Մուրացանի անվան հ. 18 հիմնական դպրոցի

ուսուցչուհի՝ Աղավնի Գրիգորյան

դասախոս՝ Աշոտ Խաչատրյան

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 2 2

ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

1 .Համաշխարհային տնտեսությունը և վերազգային կորպորացիաները

2 .Համաշխարհային տնտեսությունը և ազատ տնտեսական գոտիները

3. Ազատ տնտեսական գոտիների գործունեությունը ՀՀ-ում

4. Եզրակացություն

5. Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսությունը,ինչպես գիտենք, ազգային տնտեսությունների փոխկապակցված ամբողջությունն է, որի հիմքում ընկած է աշխատանքի աշխարհագրական բաժանումը: Աշխատանքի աշխարհագրական բաժանումը իր հերթին պայմանավորված է երկրների միջազգային տնտեսական հարաբերություններով: Միջազգային տնտեսական հարաբերությունները անընդհատ բարդանում են,ձեռք բերում նոր ձևեր: Գոյություն ունեն միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր ձևեր: Դրանցից են արտաքին առևտուրը, գիտատեխնիկական համագործակցությունը, վարկաֆինանսական հարաբերությունները, փոխհատուցման գործարքները, միջազգային արտադրական համագործակցությունը տնտեսական ազատ գոտիների ստեղծումը, վերազգային կորպորացիաների ստեղծումը, բազմաբնույթ ծառայությունների մատուցումը, միջազգային զբոսաշրջությունը և այլն: ՀՏ-ն համարվում է ոչ միայն բարդ, այլ նաև շատ դինամիկ համակարգ, որում վերջին տասնամյակներին կատարվեցին խոշոր փոփոխություններ, ինչի հետևանքով փոխվեց ՀՏ-ի ամբողջ սոցիալ տնտեսական նկարագիրը: ՀՏ-ն կերպարանափոխվեց ոչ միայն տեխնոլոգիական,այլ նաև սոցիալ-տնտեսական հարաբերություններում: Դրա համար էլ բնութագրելով ՀՏ առաջացման ֆենոմենը, նրա էությունն ու բովանդակությունը անհրաժեշտ է այն քննարկել և՛ միջազգային տնտեսական հարաբերությունների, և՛ միջազգային արտադրողական ուժերի զարգացման տեսանկյունից:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԸ

Միջազգային բազմազգ կորպորացիաները /վերազգային կորպորացիաներ/ նորություն չեն մեր իրականության մեջ: Դրանց առաջացման հիմքերը կարելի է փնտրել 17-րդ դարում,երբ կազմավորվեց առաջին բազմազգ կազմակերպությունը՝ Բրիտանական Օստ ԻՆդիան ընկերությունը, որի հիմնական նպատակն էր իրականացնել առևտրային գործողություններ Հնդկաստանում, որը սակայն դարձավ Հնդկաստանի գաղութացմանը նպաստող գործոններից մեկը: 1960-ական թվականներին վերազգայան կապիտալի առաջացման պատճառով տնտեսության մեջ մոնոպոլիայի կարևոր ձև դարձավ ոչ թե պետական մոնոպոլիան,այլ ժամանակակից վերազգային կորպորացիան,որն ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում է կապիտալիստական արտադրության ամենաբարձր ձևը: Վերջինս դուրս եկավ առանձին ազգային տնտեսություններից, կրելով համաշխարհային բնույթ և սկսելով օգտագործել ոչ թե պետական կապիտալը,այլ մասնավորը: Այսինքն, վերազգային կորպորացիաների հիմքում դրված է միջազգային մասնավոր կապիտալը, չնայած,որ դուս է գալիս պետական մոնոպոլիստական կորպորացիայի համակարգից, լիովին չի անջատվում դրանից, այլ փոխվում է, այսինքն հարմարեցնում է իր պահանջներին: Վերազգային կորպորացիաների առաջացման պատճառների թվում կարելի է առանձնացնել տնտեսական արդյունավետությունը, որը պայմանավորված է մի շարք ճյուղերում արտադրության մեծ ծավալների հետ: Արդյունքում արդարացված է դառնում դրանց գործունեությունը գլոբալ մասշտաբներով: Այն անհրաժեշտությունը, որը կապված է մրցակցային պայքարին դիմակայելու հետ, նպաստում է միջազգային մասշտաբներով արտադրության և կապատալի կենտրոնացմանը, համապատասխանաբար հնարավորություն է առաջանում կրճատելու արտադրության ծախսերը և ստանալ գերշահույթ: Օտարերկրյա մասնաճյուղերը բացառիկ կարևոր դեր են խաղում օտարերկրյա շուկաներին մուտք գործելու հնարավորություն տալու, ինչպես նաև արտադրության ծախսերի կրճատման ու շահույթի մեծացման գործում: Այդ ամենը ապահովում է վերազգային կորպորացիաների ֆինանսական կայունությունը և օգնում է նրանց պահպանել իրենց կայուն գործունեությունը ճգնաժամային պայմաններում: Վերազգային կորպորացիաները իրենց գործունեության սկզբնական փուլում մի շարք հատկությունների առիթ հանդիսացան: Ոմանք իրենց գործունեությունը դիտարկում էին ավերիչ և քայքայիչ, ինչը պայմանավորված է արդյունաբերության ոլորտում բացասական հետևանքներով: Սակայն միանշանակ պնդել դրանց ավերիչ կամ բացարձակ օգտակար լինելու մասին անկասկած սխալ է և միայն ուսումնասիրությունները թույլ կտան պարզել դրանց իրական և օբյեկտիվ բնույթը: Փորձենք հասկանալ,թե ինչ հնարավորություններ և առավելություններ են ձեռք բերում պետությունն ու բազմազգ ընկերությունները համագործակցության արդյունքում, և ինչ առանձնահատկություններով են դրանք պայմանավորված: Համաշխարհային ընդլայնումը, նախ և առաջ բազմազգ կորպորացիաների /ԲԿ/ համար նոր շուկայի մեծ հնարավորություն է: Արտադրելով մի որոշակի ապրանք այսպես

կոչված մայր երկրում,ընկերությունները կանգնում են մի շարք դժվարությունների առջև /ապրանքի ներմուծման, ճանապարհածախսի, սպառման, շուկայում մրցունակ տեղ գրավելու և այլ հարցերում/, հետևաբար ավելի շահավետ է արտադրել և տեղում սպառել ապրանքը: Հաջողված օրինակ կարելի է համարել Կոկա-Կոլայի ԲԿ-ն, որը իր ապրանքատեսակների համաշխարհային սպառման և իրացման հարցում օգտվել է հենց այս մեթոդից, հիմնելով իր արտադրամասերը աշխարհի մի շարք երկրներում՝ լինելով աներիկյան կազմակերպություն: Այստեղ առաջ է գալիս հաջորդ հարցը. Եթե ԲԿ-ը իրենց արտադրությունը հիմնում են զարգացող երկրներում, ապա հնարավորություն է ստեղծվում նաև օգտվել ավելի էժան ռեսուրսներից /լինի դա հումք, թե աշխատուժ/, հետևաբար նաև ներդրումների քանակը: Պետությունների շահերի տեսանկյունից ԲԿ-ի գործունեությունը օգնում է նախևառաջ երկրի տնտեսական աճին: Բացվում են նոր աշխատատեղեր, հնարավորություն է ստեղծվում ավելացնելու դրամաշրջանառությունը, մեծանում են նոր ներդրումներ իրականացնելու հեռանկարները: Այս գործոններով պայմանավորված մեծանում է նաև շուկայի զարգացման հնարավորությունները, զարկ է տրվում երկրի արտահանման ներուժի զարգացմանը, ավելանում են եկամուտները և հետևաբար նաև տեխնոլոգիական առաջընթացի ապահովման համար,քանի որ նոր արտադրությունը նշանակում է տեխնիկապես հագեցած արտադրություն,այսինքն տեխնիկայի ներկրում կամ խթան տեղական բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության համար: Առավել ընդհանուր տեսակետից դիտարկելիս հարկ է նաև նշել, որ այս համագործակցությունը խթանում է միջպետական հարաբերությունների բարելավումը: Հիմքում ունենալով տնտեսական փոխշահավետ համագործակցությունը հաճախ նաև սերտանում և ամրապնդվում է քաղաքական աջակցությունը և փոխըմբռնումը: Սակայն միշտ չէ,որ պահպանվում են պետության ԲԿ-ի գործառույթները հստակեցնելու համար պետությունը կոնկրետ քայլեր և գործողություններ պետք է ձեռնարկի, որպեսզի խուսափի հնարավոր բացասական ազդեցությունից: Այդպիսի գործողություն կարելի է համարել 1940թ. ԱՄՆ-ի կողմից սահմանված արգելքը ազատ առևտրի սահմանափակման հարցում,որի նպատակն էր Երկրորդ համաշխարհայինի ընթացքում ապահովել երկրի անվտանգությունն ու տնտեսական կայունությունը: Պետությունների փոխհարաբերությունների վրա կարող է նաև ազդել այն հանգամանքը,որ ԲԿ-ի դուստր ընկերությունները սովորաբար կախման մեջ են գտնվում հիմնական կենտրոնից,դրանով իսկ կախվածության մեջ դնելով պետությունը,որտեղ տեղակայված են: Հարկ է նշել նաև այն հանգամանքը ,որ ԲԿ-ը որքան էլ փորձեն լինել համաշխարհային կազմակերպություններ,որոնք հետապնդում են ընդհանուր բարօրության հասնելու միջոցները, որոնք որոշակի երկրում առաջացած կառույցներ են,որոնք իրականացնում են միջազգային գործառույթներ և հետևաբար նախապատվությունը տալիս են իրենց ազգային հասարակության շահերին: Այն,որ վերազգային կորպորացիաները հսկայական ազդեցություն ունեն համաշխարհային տնտեսության վրա, կասկածից վեր է: Ընդ որում վերազգային

ընկերությունները նշանակալի դերակատարում ունեն իրենց շրջանառության ծավալների տեսակարար կշռի,այլև զբաղվածության մեջ ունեցած մասնաբաժնի շնորհիվ: Մեկ պարզ օրինակը բավարար է ապացուցելու այս պարզ ճշմարտությունը: 2012թ. Ամփոփ տվյալների համաձայն General Electric ընկերությունը,որը գործունեություն է ծավալում աշխարհի շուրջ 100 երկրներում,ունեցել է 147 մլրդ դոլլարի եկամուտ,ինչը էապես գերազանցում է եկամուտների միջին մակարդակ ունեցող երկրների /օրինակ Վիետնամի/ՀՆԱ-ն: Այս ամենի հետ միասին, որքան էլ որ պարադոքսալ կարող է հնչել, վերազգային կորպորացիաների կողմից վճարվող հարկերի մեծությունը բավական համեստ է: Տնտեսագետների շրջանում հատկապես թեժ քննարկումներ սկսվեցին,երբ պարզ դարձավ,որ այնպիսի համաշխարհային հսկաներ,ինչպիսիք են Starbucks-ը, Google-ը կամ Amazon-ը՝համեմատաբար քիչ հարկ են վճարում: Իսկապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպական երկրներում, որոնք աչքի են ընկնում համեմատաբար բարձր հարկերով, խոշոր վերազգային կորպորացիաների մասնաճյուղերը 32-57%-ով ավելի քիչ հարկ են վճարում, քան համանման ձեռնարկությունները: Այս տվյալները հատկապես մեծ իրարանցում առաջացրեցին Մեծ Բրիտանիայում: Միանգամից առաջնային պլան մղվեց այս վարկածը,որ գործ ունենք հարկերից խուսափելու դեպքերի հետ: Սակայն իրականում առավել խորքային ուսումնասիրությունը հերքեց նման երևույթների առկայությունը: Վերլուծաբանները համարում են, որ այս ֆենոմենը պայմանավորված է նրանով, որ խոշոր կորպորացիաները շատ ավելի արտադրողական և արդյունավետ են աշխատում, ինչն էլ նպաստում է վճարվելիք հարկերի հարաբերական նվազմանը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Վերջին տասնամյակներում աշխարհում լայն տարածում է ստանում տնտեսավարման նոր ձևի՝ ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Ազատ տնտեսական գոտի ստեղծվում է այն տարածքում, որն ունի հարմար տնտեսաաշխարհագրական դիրք, ազատված է ներմուծվող և արտահանող մաքսատուրքերից կամ ունի մաքսային արտոնյալ ռեժիմ: Ազատ գոտու ստեղծմամբ ավելանում են ներմուծվող և արտահանվող ապրանքների, արտասահմանյան ներդրումների ծավալները, նյութական, տեխնոլոգիական և աշխատանքային ռեսուրսների քանակը: Աշխարհում արդեն մոտ 3000 ազատ գոտի կա,որոնց զգալի մասը Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրներում է: Նախատեսվում է ազատ տնտեսական գոտիներ ստեղծել նաև Հայաստանում: Ազատ տնտեսական գոտին /ԱՏԳ/ այն վայրն է,որտեղ գործարար և առևտրային օրենքները տարբեր են երկրի մնացած մասերից: ԱՏԳ-ները գտնվում են երկրի ազգային սահմաններում և դրանց նպատակներն են ՝ առևտրի ավելացում,ներդրումների ավելացում,աշխատատեղերի ստեղծումն արդյունավետ կառավարում: Գոտու գործարարներին խրախուսելու համար ներդրվում է ֆինանսական քաղաքականություն: Այս քաղաքականությունը սովորաբար վերաբերում է ներդրումներին, հարկերին, առևտրին, քվոտաներին, մաքսային և աշխատանքային կանոնակարգերին: ԱՏԳ-ում բիզնես վարելը սովորոբար նշանակում է, որ ընկերությունը ստսնում է հարկային խթաններ և ավելի ցածր սակագներ վճարելու հնարավորություն: Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը հյուրընկալող երկրի կողմից կարող է հիմնավորվել արտասահմանյան ուղղակի ներդրումների ներգրավման ցանկությամբ: Ազատ տնտեսական գոտում գտնվելու շնորհիվ կարելի է արտադրել և առևտուր անել ավելի ցածր գնով՝ նպատակ ունենալով պահպանել մրցակցությունը գլոբալ համատեքստում: Վերջին տարիներին ԱՏԳ-ները մեղադրվում են միջազգային արվեստի հանցագործություններ կատարելու մեջ՝ թույլ տալով, որ գողացված արվեստի գործերը տասնամյակներ շարունակ մնան պահեստավորված: Ազատ գոտիները օգտագործվել են դարեր շարունակ ապրանքների անվճար պահպանման և փոխանակման համար: Ճիշտ է, համաշխարհային տնտեսության մեջ ԱՏԳ-ները համարվում են նոր երևույթ, սակայն նմանատիպ տարածքների ստեղծման գաղափարն առաջացել է դեռևս 15-16-րդ դարերում և իր արտահայտությունն է ստացել «Ազատ նավահանգիստների» տեսքով: ԱՏԳ-ների պատմությունը սկսվում է դեռևս այն ժամանակներից, երբ իսպանացի Վասկո Նունես դե Բալբոան խարիսխ գցեց պանամական ծովափին և իր ընկերների հետ միասին երկու օվկիանոսները բաժանող այդ հատվածում հիմնեց ,,Առևտրային նավահանգիստներ: ԱՏԳ-ներն իրենց զագացման ընթացքում բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվել և

աստիճանաբար կատարելագործվել: ԱՏԳ-ների զարգացմանը զուգընթաց դրանց տրամադրվող արտոնություններն աստիճանաբար ավելացել են՝ փոխելով նաև գոտիների տնտեսական բովանդակությունը: Եթե ԱՏԳ-ների ստեղծման սկզբնական շրջանում վերջիններս միայն ապրանքների պահպանման և առևտրային գործունեության վայր էին հանդիսանում,ապա զարգացման ընթացքում գործունեության շրջանակներն ընդլայնվել են՝ ընդգրկելով վերարտադրության բոլոր փուլերը: Ինչ վերաբերում է «Առևտրային նավահանգիստներին», ապա վերջիններս որևէ նավահանգստի տարածք էին, որոնք նախատեված էին ապրանքների առանց մաքսերի պահպանման համար և նպաստում էին ներքին շուկայի զարգացմանը, հետագայում նաև արտաքին շուկա դուրս գալուն: Առաջին «Ազատ նավահանգիստն» առաջացավ Ճենովայում՝1595թ.: Այնուհետև նման նավահավզիստներ ստեղծվեցին նաև Վենետիկում՝1661թ., Մարսելում՝1669թ., Օդեսայում՝ 1817թ.: 19-րդ դարեվերջին և 20-րդ դարասկզբին ազատ նավահանգստային գոտիների ստեղծման միտքը լայն տարածում գտավ և այժմ գործում են ավելի քան 200 նավահանգստային գոտիներ: Վերջիններս նախատեսված են միջանցիկ փոխադրումների և բեռների պահեստավորման համար: ԱՏԳ-ներ սկսեցին ստեղծվել ծովային նավահանգիստների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների որոշ տարածքներում, իսկ հետագայում նաև դրանց հարող տարածքներում: Աշխարհին հայտնի առաջին ԱՏԳ-ներից մեկն Իտալիայի Լիվորնո քաղաքն էր, որը 1547թ. հայտարարվեց ազատ առևտրի քաղաք: Այստեղ վաշխառուներն իրավունք ստացան ազատ առևտուր իրականացնել՝ազատվելով հարկային պատասխանատվությունից: Հետագայում այս օրինակին սկսեցին հետևել այլ երկրներ ևս: Օր. իտալական Տրիեստ քաղաքում և հարավսլավական Շիբենիկում ստեղծվեցին ազատ առևտրային գոտիներ, իսկ 1740թ. ստեղծվեց Ջիբրալթարի ազատ առևտրային գոտին: Հետագայում տարբեր երկրներում նույնպես ստեղծվեցին նմանատիպ գոտիներ: 1819թ. Սինգապուրում ստեղծվեց ազատ առևտրային գոտի: Այդ գոտիներում ընդհանուրն այն էր,որ առանց մաքսավճարի առևտուր անելու արտոնյալ պայմաններ էին ստեղծվում վերջիններիս միջև, սակայն արդյունաբերական գործունեություն իրականացնելու պարագայում այդ արտոնությունները չէին գործում: Ինչ վերաբերում է ժամանակակից ԱՏԳ-ներին, ապա դրանք ստեղծվել են 1950-ականների վերջերին՝արդյունաբերական երկրներում: Առաջինը ստեղծվել է Իռլանդիայի Կլեր քաղաքում գտնվող Shannon օդանավակայանում 1959թ.,որի շնորհիվ Իռլանդիան մեծ ուշադրության արժանացավ: 1970-ականներից սկսած ԱՏԳ-ներ են ստեղծվել Լատինական Ամերիկայում և Արևելյան Ասիայում: 1979 թ.Դեն Սիաոպինգի կողմից Չինաստանում առաջինը ստեղծվեց «Շենժեն» ազատ տնտեսական գոտին,որը խրախուսում էր օտարերկրյա ներդրումները և միաժամանակ արագացված արդյունաբերականացումը տարածաշրջանում: Այս գոտիները գրավեցին բազմաթիվ կորպորացիաների ուշադրությունը: Չինաստանը առաջատարն է, չէ որ միայն Հեյնա կղզին հայտարարված է ազատ տնտեսական գոտի: Չինաստանի հետ համագործակցության միջոցով ԱՏԳ-ներ ստեղծվեցին նաև

աֆրիկական երկրներում: ԱՏԳ-ների զարգացման սկզբնական փուլում ազատ գոտիներում հիմնականում իրականացվում էր առևտրային գործունեություն, որը ներառում էր ապրանքների պահպանումը, փաթեթավորումը, տեսակավորումը և այլն: Սակայն հետագայում սկսեցին վերամշակում իրականացնել, ինչը ավելացնում էր ապրանքի ինքնարժեքը և որն էլ պատճառ հանդիսացավ, որպեսզի ազատ գոտիների տնտեսական բովանդակությունը ենթարկվի էական փոփոխությունների: ԱՏԳ-ների հիմնադիրներն այն կարծիքի էին, որ ճգնաժամային իրավիճակներում պետության միջամտությունը չի կասեցնի արդյունաբերական կենտրոնների անկումը: Այդ նպատակով ձեռնարկատերերին տրվեցին հարկային և այլ արտոնություններ, որոշակի գործարքներ իրականացնելու իրավունք, ինչն անթուլատրելի էր տեղական օրենսդրությամբ: Հարկ է նշել, որ ԱՏԳ-ների զարգացման սկզբնական շրջանն էապես տարբերվում է ներկայիս վիճակից: Եթե սկզբնական շրջանում ազատ գոտիները տարածում էին ստացել հիմնականում զարգացած երկրներում,ապա ներկայումս ԱՏԳ-ներ գոյություն ունեն զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում: ԱՏԳ-ների զարգացման վրա մեծ ազդեցություն են ունենում համաշխարհային տնտեսության զարգացման միտումները՝ գիտատեխնիկական առաջընթացը, միջազգային ֆիրմաների մրցակցությունը,արժութային փոխարժեքների կուրսերը: Ըստ ուսումնասիրությունների համաշխարհային տնտեսությունում կուտակվել է ԱՏԳ-ների ստեղծման և գործունեության բավականին մեծ դրական փորձ: Օր.2000թ. սկզբին աշխարհում գործում էին մոտ 1350 – 1450 տարբեր տեսակի ԱՏԳ-ներ,որից միայն արտադրության արտահանման ուղղվածություն ունեցող գոտիներում զբաղվածների թիվը կազմում էր 4 մլն մարդ: 2001թ. տարբեր տեսակի ԱՏԳ-ների միջոցով իրականացվում էր համաշխարհային ապրանքաշրջանառության 30 %-ը: ԱՏԳ-ները որոշ չափով ուսումնասիրելիս հարց է առաջանում,իսկ ինչ բացասական հետևանքներ են թողնում ԱՏԳ-ները տնտեսության վրա: Պարզվում է,որ դրանք ունեն բացասական հետևանքներ

- ԱՏԳ-ի ստեղծման համար հող է պահանջվում, որի ձեռք բերումը հանգեցնում է գույքի և կենսապահովման ոչ բավարար փոխհատուցման
- ԱՏԳ-ն պատասխանատվություն չի կրում ազգային աշխատանքային օրենսդրության առաջ:Աշխատողներին չի տրվում նվազագույն աշխատավարձ;Աշխատանքային տևողությունը երկար է:Աշխատողները կարող են ազատվել աշխատանքից առանց արդարացման և փոխհատուցման:
- ԱՏԳ-ները չեն վճարում հարկեր
- Քանի որ ԱՏԳ-ները սեփականաշնորհված ,,քաղաքներ,, են կա գաղտնիություն և վերջինիս հետ կապված թափանցիկության պակաս:
- ԱՏԳ-ները թույլ են տվել,որ կորպորացիաները զավթեն մեծ տարածքներ: Դա հանգեցնում է տեղական տնտեսությունների մահվան: Դրանք ստեղծում են ոչ թե կայունություն,այլ հարստության համակենտրոնացում:

- Նրանք պարտավորություններ չունեն պահպանել շրջակա միջավայրի ազգային կանոնակարգերը:

ԱՏԳ-ի երկրպագուները կարող են մատնանշել մի քանի հաջողված պատմություններ,որոնցից ոչ մեկը որևէ արժեք չեն ներկայացնում: Գոտիներն ավելի շատ փողերի լվացման համար ապաստան են հանդիսանում,օրինակ արտահանման խեղաթյուրման միջոցով: Կառավարությունները պետք է դաս քաղեն թերություններից, փոխհատուցեն ծախսերը: Գոտիները պետք է միանան համաշխարհային շուկաներին: Այդ նպատակով պետք է կատարվեն ենթակառուցվածքային բարելավումներ, հանրային ծախսեր՝ ճանապարհներ, երկաթուղիներ և նավահանգիստներ՝ իրականացնելու լրացուցիչ բեռնափոխադրումներ: Նման ներդրումների բացակայությունը Աֆրիկայում շատ ԱՏԳ-ների անկման պատճառ հանդիսացավ:

Ճիշտ հավասարակշռությունը պետք է բխի պատշաճ քաղաքական վերահսկողության և իշխանության բյուրոկրատիայի ազատությունից: Կան լիգիտիմ մտավախություններ,որ Ճապոնիայի նոր գոտիները անկում են ապրելու,քանի որ կենտրոնական իշխանությունները մերժում են միջամտել ԱՏԳ-ների գործերին: Այնուամենայնիվ,զարգացած քաղաքների շուրջ կառուցած գոտիները հայտնի են իրենց օրենքները սահմանելու իշխանությամբ և չի բացառվում,որ կստեղծեն պետություններ պետությունների ներսում:

Շատ մասնագետների կարծիքով այն երկրները, որոնք ընդհանրապես գոտիներ չունեն, իսկապես ազատ են:

Այնուամենայնիվ, ռիսկն առկա է, որ երկրներն այս համակարգը կչարաշահեն և կօգտագործեն այն որպես արգելքները պահպանելու արդարացում՝ հարկերի և վճարների տեսքով: ԱՏԳ-ները նույնպես ստեղծում են չափից ավելի բյուրոկրատիա, որով գումարները հեռացնում են համակարգից:

Լրիվ ազատությունը կստեղծի քաոս, ուստի տնտեսությունը զարգացնելու համար անհրաժեշտ է պետության փոքրիկ միջամտություն:

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Ազատ տնտեսական գոտիները ունեն տարբեր կազմակերպչական ձևեր և նպատակներ: Կան առևտրային, տարանցիկ, արդյունաբերական, ապահովագրական և բանկային ծառայությունների ազատ տնտեսական,ինչպես նաև գիտատեխնիկական գոտիներ:

Ազատ տնտեսական գոտիներ ամենաշատը ստեղծվել են Ասիայի զարգացող երկրներում:

Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում նպաստում է գիտատեխնիկական առաջընթացի արագացմանը,գիտատար արտադրանքի ավելացմանը և այդ ապրանքներով շուկայի հագեցմանը: Համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Հետք»» – ին փոխանցած տվյալների ներկայում Հայաստանում գործում է երեք գոտի՝««Ալյանս»,«Մերիդիան» և « Մեղրի»: Ընդհանուր առմամբ այս գոտիներում գրանցված է 15 ընկերություն:

«Ալյանս» ԱՏԳ–ն ստեղծվել է կառավարության 2013 թվականի որոշմամբ: Այս գոտում գրանցված է 9 ընկերություն,որոնք ունեն բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝էլեկտրոնիկայի,ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի,տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի,արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության համակարգերին նյութերի նախագծումն արտադրությունն ՀՀ–ի տարածքում չարտադրվող ապրանքատեսակների արտադրության ոլորտներում:

«Մերիդիան» ազատ տնտեսական գոտին ստեղծվել է կառավարության 2014 թվականի փետրվարի որոշմամբ: Սակայն այս գոտու շահագործման մեկնարկը տրվել է 2015թ. մարտի 12-ին: Այս արտադրաարդյունաբերական՝ ոսկերչության, ակնագործության ու ժամագործության ոլորտները: Վերջին տվյալներով «Մերիդիան»–ում գրանցված է 6 ընկերություն:

Մեղրի ազատ տնտեսական գոտի (անգլ.՝ Meghri Free Economic Zone) կամ **Մեղրի ԱՏԳ**, հատուկ տնտեսական գոտի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի հարավում՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանի: ԱՏԳ տնօրենն է Աշոտ Զաքբաբյանը:

Ազատ տնտեսական գոտին ստեղծվել է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, գոտու կազմակերպիչ է ճանաչվել պետության կողմից ստեղծված «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն, Գործարար ծրագրի մշակումը իրականացրել է «Ավենյու քընսալթինգ գրուպ» ՍՊԸ (անգլ. Avenue Consulting Group) խորհրդատվական ընկերությունը: ԱՏԳ-ն նախատեսված է կառուցապատել 2 փուլով:

Առաջին փուլ

Գոտու կառուցման առաջին փուլը ավարտվել է 2017 թվականի դեկտեմբերին, երբ ստեղծվել են նվազագույն անհրաժեշտ ենթակառուցվածքներ և նախապայմաններ՝ ԱՏԳ աշխատանքները մեկնարկելու և ԱՏԳ-ում գործունեություն ծավալելու հետաքրքրություն ունեցող ընկերությունների հետ տեղում գործունեությունը կազմակերպելու համար: Այդպիսով, 2017 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել Մեղրի ԱՏԳ բացման արարողությունը, որին ներկա է գտնվել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը: Ըստ Կարեն Կարապետյանի, տնտեսական գոտում նախատեսվում է ակտիվացնել Իրանի հետ սահմանային առևտուրը, զբոսաշրջությունը: 2017 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը նշել:

Մեր մտադրությունները բավական լուրջ են, որովհետև վստահ ենք, որ այն պայմանները, որոնք ստեղծվելու են Մեղրիի ազատ տնտեսական գոտում և այն հնարավորությունները, որոնք ունի մեր երկիրը, նկատի ունեմ տնտեսական ռեժիմները, որոնք մենք ունենք ԵԱՏՄ-ի, Եվրամիության, մեր հարևան Իրանի ու այլ երկրների հետ, շատ լավ հնարավորություններ են ստեղծում, որպեսզի բիզնեսը զարգանա:

Երկրորդ փուլ

2018 թվականի հունվարի 30 - ին «Ավենյու քընսալթինգ գրուպ» (անգլ. Avenue Consulting Group) ընկերության Ռազմավարական կառավարման խորհրդատվական ծառայության ղեկավար Կարեն Մարտիրոսյանը ներկայացրել է «Մեղրի» ԱՏԳ կառուցապատման երկրորդ փուլի գործարար ծրագիրը, ըստ որի՝ երկրորդ փուլով նախատեսվում է ԱՏԳ գործունեության, ենթակառուցվածքների, տարածքի հավելյալ 70 հեկտարով ընդլայնում՝ ստեղծելով նախապայմաններ շահութաբեր բիզնես ծավալելու համար: Վերոնշյալ տարածքներից շուրջ 50 հեկտարը տրամադրվելու է շահագործողների գործունեության, 10 հեկտարը՝ լոգիստիկ-պահեստային տարածքների, մնացած տարածքները՝ գրասենյակային և այլ ծառայությունների համար:

Ակնկալվող ազդեցությունը տնտեսության վրա

Ինչպես նշվում է լրատվամիջոցներում, ազատ տնտեսական գոտու հնարավորությունները լավագույնս օգտագործելու համար թույլատրվել է ոլորտային լայն ընդգրկվածություն. ներկայացված կլինեն գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, զբոսաշրջության և այլ ոլորտները: Բացի այդ, ԱՏԳ գործունեության արդյունքում առաջիկա տարիներին նախատեսվում է ներգրավել 50-70 շահագործող ընկերություններ, որոնք կիրականացնեն շուրջ 100-130 մլն դոլարի ներդրումներ, կստեղծեն շուրջ 1500 նոր աշխատատեղ և կարտահանեն 250 մլն դոլարի ապրանքներ և ծառայություններ[1]:

Սպասվում է, որ ԻԻՀ հետ սահմանակից տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտին, հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, ինչպես նաև առևտրային և լոգիստիկ հնարավորությունները, Հայաստանի բազմավեկտոր առևտրային արտոնյալ ռեժիմները, կարող է կամուրջ դառնալ Իրանի, ԵԱՏՄ և ԵՄ երկրների միջև: Ինչպես նշվում է ԶԼՄ-ներում, Մեղրու ազատ տնտեսական գոտին կնպաստի ոչ միայն մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այլև Հայաստան օտարերկրյա կապիտալի ներհոսքին, ԻԻՀ հետ տնտեսական կապերի ամրապնդմանը, ԵԱՏՄ անդամակցության, ԵՄ հետ առկա հարաբերությունների և ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը:

Ազատ տնտեսական գոտում գրանցված առաջին ընկերությունը եղել է «Ինստիգեյթ ռոբոտիքս» ՓԲԸ–ն: 2014թ-ից գործունեություն ծավալող ընկերությունը զբաղվում է ռոբոտաշինությամբ, կրթական և արդյունաբերական նշանակության ամօդաչուների արտարդությամբ: Հայաստանում ազատ տնեսական գոտիների ստեղծման հիմնական նպատակն է հանդիսացել ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավումը, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճի նպաստումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, կայուն տնտեսական զարգացում ապահովելը:

Ազատ տնտեսական գոտու ռեզիդենտ (շահագործող) կարող են դառնալ ՀՀ –ում գրանցված առևտրային իրավաբանական անձինք,անհատ ձեռնարկատերերը կամ մասնաճյուղերը, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչությունները, որոնք ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում բցաառապես ազատ տնտեսական գոտում:

Ազատ տնտեսական գոտում չեն կարող իրականացվել ռադիոակտիվ նյութերի արտադրություն և առևտուր, զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի արտադրություն և առևտուր, առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլատվության թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծում, պահպանում, արտադրություն և առևտուր: Նախ արգելվում է ֆիզիկական անձնանց, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների ազնձանց, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքն ազատ տնտեսական գոտի՝ առանց մաքսային հսկողության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ազատ տնտեսկաան գոտիները կայուն տնտեսական զարգացման նախապայման են հանդիսանում: Դրանք մեծապես պայմանավորում են ապրանքների և ծառայությունների համաշխարհային շուկայի դինամիկան և կառավարումը, համեմատաբար նոր տեսակ է, որը համաշխարհային պրակտիկայում հայտնվել է 1950–ական թվականների վերջում և լայն տարածում ստացել 1960–ականներին: Այսօր ԱՏԳ–ը գործում է ավելի քան 80 երկրներում: ԱՏԳ–ի միջոցով է տեղի ունենում համաշխարհային ապրանքաշրջանառության 10%: Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հիմնական նպատակն է օտարերկրյա ներդրումների,առաջադեմ տեխնոլոգիաների, աշխատանքի կազմակերպման նոր և արդյունավետ ձևերի մեթոդների ներգրավումն է նոր աշխատատեղերի ստեղծմանը,արտասահմանյան ծավալների աճի խթանմանը: Իսկ ՎԱԿ–երը վերահսկում են կապիտալի և ՕՈՒՆ–երի միջազգային շարժը, խոշոր դեր են խաղում տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանակման գործում,համարում են աշխատուժի միջազգային տեղաշարժի խթանիչներ:

Այն, որ ՎԿ–երը հսկայական ազդեցություն ունեն համաշխարհային տնտեսության վրա կասկածից վեր է: Ընդ որում ՎԿ–ն մեծ դեր է կատարում համաշխարհային առևտրում շրջանառության տեսակարար կշռինև զբաղվածների մասնաբաժնի շնորհիվ: Այնուամենայնիվ ՎԿ–ի կողմից վճարվող հարկերի մեծությունը բավական համեստ է :

Ներկայումս գոյություն չունի համաշխարհային տնտեսության մեջ մի գործընթաց, որ կընթանա առանց ՎԱԿ–ի միջամտության: Դրանք ընդունում են ուղղակի և անուղղակի մասնակցություն համաշխարհային քաղաքականության գործընթացում և տարբեր երկրների քաղաքական գործընտացում:

Գրականության ցանկ

1. https://hy.wikipedia.org

2. http://library.asue.am/books/3833.pdf

3. https://www.mineconomy.am/page/255